ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/40

ք. Երևան «10» դեկտեմբեր 2019թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Վ. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Կատարող»), մի կողմից, և «Սալոն» ՍՊԸ, ի դեմս տնօրեն Ա. Մուղումյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **հաճախորդների սպասարկման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **19560000(տասնինը միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի 7.15 կետում նշված համաձայնագրին կից վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[22] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև

---

[22] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	«ՍԱԼՈՆ» ՍՊԸ
ք. Երևան, Մ. Ադամյան 1	ք. Երևան, Դուրյան թաղ.49 շ., բն.14
ՀՎՀՀ՝ 02629081	ՀՎՀՀ 00889166
Հ/Հ 900011018539	h/h 2471201718520000
ՖՆ գործառնական վարչություն	Արդշինինվեստբանկ ՓԲԸ
ՖՆ գլխավոր քարտուղարի	Տնօրեն՝ Ա. Մուղումյան
պաշտոնակատար	
---------- Ա. Հարությունյան	----------
	(ստորագրություն)
	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 10 » մարտի 2019թ. կնքված
ՀՀ ՖՆ-ԳՀՇՁԲ-19/40 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	79341210/503	Սննդի մատուցման և սպասարկման ծառայություններ* Սննդի մատուցման տարածքի (այսուհետ՝ Ճաշասրահ) ընդհանուր մակերեսը պետք է լինի 200 ք.մ.-ից ոչ պակաս: Ճաշասրահի ընդհանուր մակերեսից պետք է առանձնացված լինի 20-ից մինչև 30 ք/մ մակերեսով սննդի մատուցման առանձին սենյակ (այսուհետ՝ Ընդունելությունների սենյակ): Ճաշարանի տարածքում՝ Ճաշասրահից ոչ ավել քան 10 մետր հեռավորության վրա պետք է լինի սանհանգույց՝ տաք և սառը ջրամատակարարմամբ, ձեռքերը չորացնող սարքով, ինչպես նաև կանանց և տղամարդկանց համար նախատեսված առանձին զուգարաններ: Ճաշասրահում պետք է նախատեսված լինի սննդի ցուցադրման և վաճառքի առանձին տարածք (այուհետ՝ Վաճառքի տարածք): Վաճառքի տարածքը պետք է կահավորված լինի ճաշատեսակների մատակարարման ցուցասեղանով, իսկ տաք ուտեստների համար՝ դրանք տաք վիճակում պահելու համար նախատեսված սարքերով: Միաժամանակ, վաճառքի տարածքի առանձին հատվածում պետք է լինեն աղցանների և քաղցրավենիքների մատակարարման ցուցասեղաններ, ընդ որում աղցանների վաճառքը պետք է իրականացվի դրանք կշռելու և համապատասխան արժեքի որոշման սկզբունքով: Վաճառքի տարածքում պետք է տեղադրված լինեն նաև. • Թափանցիկ դռներով սառնարաններ նախատեսված ըմպելիքների համար; • Դիմային կողմից բաց ցուցափեղկեր նախատեսված հացամթերքի համար • Թեյի և սուրճի ավտոմատ սարքավորումներ; • Առնվազն երկու միկրոալիքային վառարան; • Խմելու ջրի դիսպանսեր; • Կշեռք նախատեսված կերակրատեսակների կշռման համար; • Առնվազն երկու դրամարկղ: Վաճառքի ենթակա յուրաքանչյուր ապրանք պարտադիր պետք է պիտակավորված լինի անվանումով և գին-քաշով:	դրամ	19560000	1	ք.Երևան, Սննդի մատուցման և սպասարկման ծառայությունների (այսուհետ՝ Ծառայություններ) մատուցման տարածքը (այսուհետ՝ Ճաշարան) պետք է գտնվի Մելիք Ադամյան 1 հասցում գտնվող շենքից ոչ ավել քան 205մ հեռավորության վրա	Ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կնքված համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 20 օրացուցային օրվա ընթացքում և մատուցման ժամկետ է սահմանվում 12 ամիս, բայց ոչ ավել 20.12.2020թ.

		Ճաշասրահը նախատեսված պետք է լինի առնվազն 130 մարդ միաժամանակյա սպասարկելու համար և կահահավորված՝ առնվազն նույն քանակի աթոռներով և սեղանատեղերով: Յուրաքանչյուր սեղանի վրա պետք է առկա լինեն համեմունքներ (աղ և աղացած սև պղպեղ), սննդի ընդունման ընթացքում օգտագործվող պարագաներ (անձեռոցիկ, ատամի փայտիկ և այլն): Նախատոնական օրերին Ճաշասրահը պետք է զարդարվի տոնին համահունչ: 2. Ճաշատեսակների ցանկ Վաճառքի տարածքում պետք է մատուցվեն կից ցանկով ներկայացվող կերակրատեսակները, ընդ որում ցանկում ներառված գները տրված են իրենց առավելագույն չափով: Կերակրատեսակները պետք է պատրաստվեն թարմ և մաքուր մթերքից, մսային տեսականին՝ թարմ (չսառեցված) մսից: Կերակրատեսակները պետք է վաճառվեն Վաճառքի տարածքում տեղադրված կշեռքով կշռելով և քաշին համապատասխան գնով: 1. Խոհանոց Խոհանոցային մասը պետք է լինի մաքուր և ապահովի սանիտարահիգիենիկ պահանջները, լինի միջատազերծված և ունենա սանիտարահիգիենիկ ապահովության հավաստագիր: Խոհանոցը պետք է կահավորված լինի վառարաններով, սալօջախներով, սառնարաններով, լվացարաններով, սպասքի չորացման սարքավորմամբ և օդափոխության համակարգով: Սպասքը պետք է լինի սպիտակ կամ բաց երանգներով, մաքուր, որակյալ, առանց ճաքերի և խազերի: Լվացման նյութերը լինեն բարձրորակ: 2. Սպասարկում և մատուցում - ցուցասեղանների մոտ հաճախորդների արագ սպասարկում; - ցուցասեղանների վրա սննդի սպառմանը զուգահեռ դրանց միաժամանակյա ավելացում (թարմացում); - սպասարկման արագության և անընդհատության ապահովման նպատակով՝ ազատված ճաշասեղաններից օգտագործված սպասքի տեղափոխում, աթոռների, ճաշասեղանների և սպասքի մաքրում; - մշտապես մաքուր սպասքի առկայություն; - ամբողջ տարածքի պատշաճ մաքրության ապահովում; - ընդունելությունների սենյակում ճաշատեսակների ճաշացանկի առկայություն; - սպասարկողների նույնատիպ վերնահագուստի ապահովում, նրանց սանիհիգիենիկ վիճակի ապահովում (հատուկ գլխաշորեր կամ գլխարկներ, միանման վերնահագուստ, սպիտակավուն գոգնոց); - ճաշարանը սպասարկման ամենածանրաբեռնված ժամերին (13:00-14:00) պետք է կազմակերպի հաճախորդների հնարավորինս արագ սպասարկումը, իսկ ժամը 10:00-13:00 և 14:00-17:00-ը՝ ունենա բավարար քանակի սնունդ, սակայն ամբողջ տեսականու առկայությունը պարտադիր չէ:					

	Անվանումը	Գինը (ներառյալ ԱԱՀ)	Գրամաժը
1	նագետի		50գր
2	Բլինչիկ		90գր
3	Հավի մսով կոտլետ		90գր
4	Հավի թևիկ		60գր
5	հորթի կոլոլակներ իտալական սոուսով		90գր
6	Հավի թև պաքսիմատով		120գր
7	հավի կրծքամսից ձողեր պաքսիմատով		90գր
8	Հորթի մսով կոտլետ		90գր
9	Հավի դիետիկ կրծքամիս		120գր
10	իշլի քյուֆթա		120գր
11	Հորթի դիետիկ միս		120գր
12	Հիացմունք		100գր
13	Մեքսիկական բլինչիկ		120գր
14	Հավի ձողեր պանրի միջուկով		100գր
15	Խուրջին--		120գր
16	Շիշ-թաուք մութաբալով		120գր
17	Խոզի մսով ֆրանսիական ջեռեփուկ		120գր
18	Խոզի լանգետ Էմանուել սոուսով-		120գր
19	Ղավուրմա		70գր
20	Հորթի մսով ռուլետ-		120գր
21	Հորթի կոտլետ սնկի միջուկով		120գր
22	Ռոպա-վիեխա		150գր
23	Հավի մսով Գուլյաշ		160գր
24	Հորթի մսով Գուլյաշ		160գր
25	խոզի մսով գուլյաշ		160գր
26	Հավի լանգետ սացեբելի սոուսով		90գր
27	Հավ արևմտյան ձևով		120գր
28	Ժուլիեն		120գր
29	Բրիզոլի		130գր
30	Լցոնած կրծքամիս Պեչուգա սոուսով--		160գր
31	Քյուֆթա -		130գր
32	Գառի խաշլամա գինով		130գր
33	տապակած քյուֆթա		100գր
34	Հավի մսով բանջարեղենով կոտլետ		120գր
35	Տավարի լանգետ Ռեդ-վայ սոուսով-		120գր
36	Կառոնա բանջարեղենով		160գր
37	Բուրիտո		190գր
38	Խոզի լանգետ տերիյակի սոուսով		120գր
39	Կուչմաչի		150գր
40	Հավի լանգետ սնկի սոուսով		100գր
41	Կոոկետաս		100գր
42	Հավի, տավարի դուետ-ռուլետ խմորով		130գր
43	Հորթի միս ասիական ձևով---		90գր
44	Քինգ-ռոլ		90գր
45	Հավի մսով պոնչիկներ		90գր
46	Հավի տեֆտելիներ պյուրեի վրա իտալական սոուսով, պանրով		90գր
47	Հորթի լցոնած թոք		90գր
48	Հավի քյաբաբ		120գր
49	Կիևյան կոտլետ		120գր
50	Բրինձ		130գր
51	Հնդկաձավար		130գր
52	Կարտոֆիլ խյուս		180գր

53	Բանջարեղենային կոտլետ		120գր
54	Մակարոն		150գր
55	Վերմիշել		130գր
56	Բրինձ վերմիշելով		150գր
57	Բրինձ մսով		150գր
58	Շոգեխաշած կաղամբ		150գր
59	Բրինձ + վետչինա, եգիպտացորեն, լոլիկով		150գր
60	Մակարոն բանջարեղենով		150գր
61	Բլղուրով վերմիշելով, փլավ		150գր
62	Խորոված կարտոֆիլ տղեմալիով, համեմով		150գր
63	Կանաչ լոբի բանջարեղենով		150գր
64	Հավի մսով և բանջարեղենով շարովի--		150գր
65	Բազուկի ճավ վրացական սոուսով		160գր
66	Ծաղկակաղամբով, դդմիկով ձվածեղ		150գր
67	Դեղին ոլոռով, բանջարեղենով սոուս,		160գր
68	Հովվի ճաշ		150գր
69	Իսպանական պաելլա--		150գր
70	Մակարոն շամպինյոնի, թթվասերի սոուսով,		150գր
71	Գրեչկա հորթի մսով, գազարով		150գր
72	Շոգեխաշած կարտոֆիլ դդումով, կարագով, (բուղլամա)		150գր
73	Իմամ-բայալդի սիսեռով, քիմիոնով		150գր
74	Խորոված սմբուկ + տապակած կարմիր բիբարով , վերջում նեխուր		150գր
75	Կախասունկ սոխարածով, ձվով, վերջում համեմ ու սամիթ		160գր
76	Լոբիո--		160գր
77	Բրնձով, թփով տոլմա		60գր
78	Կարմիր բրինձ սիսեռով,		150գր
79	Մակարոն մեքսիկական ձևով--		150գր
80	Հաճար սոխարածով, տհալով		150գր
81	Իտալական կապոնատա--		150գր
82	Խորոված դդում, բազուկ, գազար՝ հատուկ սոուսով--		150գր
83	Բրինձ բանջարեղենով---		150գր
84	Մակարոն մսով,		150գր
85	Արցախի կուրկուտ մսով		160գր
86	Բանջարեղենային ժառկո կանաչ լոբով---		150գր
87	Ամառային ճաշ		160գր
88	Սինի մանթի		60գր
89	Բրինձ մեքսիկական ձևով---		150գր
90	Մակարոն կորեական ձևով--		150գր
91	Գյուղական կարտոֆիլ սվանական աղով		150գր
92	Չամբոտա---		150գր
93	Մեքսիկական սոուս---		150գր
94	Կաղամբով աղցան		120գր
95	Աղցավ մառոլ բողկ		120գր
96	լոլիկ վարունգով աղցան		120գր
97	Աղցան մառոլ լոլիկ		120գր

98	Աղցան տապակած սմբուկ, կարմիր պղպեղ, բրոկոլի		120գր
99	Աղցան վարունգով և սիսեռով		120գր
100	Կանաչ լոբով աղցան		120գր
101	Քոլիսլոու		120գր
102	Արևելյան աղցան		120գր
103	Չիքն- քարի		120գր
104	Ֆետայով, քամած մածունով լցոնած լոլիկ		160գր
105	Ֆիրմային աղցան		120գր
106	Մարինացրած բողկ		120գր
107	Քամած մածուն նեխուրով,բարբարիսով		150գր
108	Սպանախ դդումով		120գր
109	Բազուկ ֆետա պանրով		120գր
110	Ռոմեն---		120գր
111	Սմբուկով փխալի---		130գր
112	Կաղամբով կորեական		120գր
113	Սմբուկով ու հորթի մսով աղցան		120գր
114	Ցեզար		180գր
115	Մարինացված բամիա		150գր
116	Մանանա		180գր
117	Հունական		150գր
118	Վալդորֆ-Աստորիա		120գր
119	Ադոբո + կորեական գազարով		120գր
120	Սմբուկի ռուլետ		130գր
121	Տապակած պղպեղով աղցան		120գր
122	Արարատյան		120գր
123	Ծաղկակաղամբ վրացական սոուսով		120գր
124	Թաբուլե արաբական ձևով		120գր
125	Թայ-բեֆ---		130գր
126	Գուրման		120գր
127	լոլիկ ցեզարի սոուսով		120գր
128	Իտալական աղցան		160գր
129	Բազուկով հումուս		120գր
130	Թունաձկով միմոզա		130գր
131	Թայլանդական հավով աղցան---		120գր
132	Հորթի լեզու, սունկ, սալորաչիր, մայոնեզ		120գր
133	Մարինացված կախասունկ		120գր
134	Հայկական աղցան		120գր
135	Մութաբալ մաղադանոսով		120գր
136	Փարիզյան աղցան		120գր
137	Կապրեզե սմբուկով		130գր
138	Քամած մածուն		180գր
139	Կարտոֆիլով կարկանդակ		150գր
140	կաղամբով կարկանդակ		150գր
141	խաչապուրի		120գր
142	պանրով կարկանդակ		150գր
143	պանիր սամիթ կարկանդակ		150գր
144	նրբերշիկով կարկանդակ		150գր
145	նրբեշիկով, պանրով կարկանդակ		150գր
146	հավի մսով, սնկով կարկանդակ		150գր
147	կալզոնե		150գր
148	լահմաջո		130գր
149	վետչինայով պանրով կարկանդակ		150գր

150	նրբերշիկով ռոլ		250գ
151	հավի մսով ռոլ		250գ
152	հավի մսով սենդվիչ		250գ
153	վետչինայով սենդվիչ		250գ
154	ոսպով կարկանդակ		150գր
155	թխվածքաբլիթներ		70գր
156	մեղրով տորթ		170գ
157	միկադո		170գ
158	պիռոգներ		160գր
159	գաթա		100գր
160	Կոմպոտներ թարմ մրգերով		250մլ.
161	կոմպոտներ հատապտուղով		250մլ.
162	Բնական հյութեր տեղում պատրաստվող		250մլ.
163	Սպաս		350գր
164	Բորշչ		350գր
165	բանջարեղենով ապուրներ		350գր
166	հավի մսով ապուր		350գր
167	Հորթի մսով ապուր		350գր
168	Կռած ապուր		350գր
169	իտալական ապուր		350գր
170	Հավի պարզ լանգետ		120գր
171	Հորթի պարզ լանգետ		120գր
172	Խոզի պարզ լանգետ		120գր
173	Հորթի թոքի լանգետ		120գր
174	Իշխանի ֆիլե		120գր
175	Սիգ		90գր
176	տժվժիկ		150գր
177	թփով տոլմա		50գր
178	կաղամբով տոլմա		60գր
179	Ամառային տոլմա		190գր
180	ղափամա		200գր
181	խաշլամա հորթի մսով կարտոֆիլով		220գր
182	Հարիսա		300գր
183	Շոգեխաշած բանջաեղեն (բրոկոլի,գազար...)		150գր
184	Շոգեխաշած ճակնդեղ		150գր
185	խորոված կարտոֆիլ		150գր
186	Գյուղական կարտոֆիլ		150գր
187	Ռյուստի		90գր
188	Խորոված պղպեղ		150գր
189	խորոված սմբուկ		200գր
190	խորոված լոլիկ		200գր
191	ոսպով ապուր		350գր
192	Հավով և բրնձով ապուր		350գր
193	Վերմիշելով ապուր		350գր
194	Քյալագյոշ		150գր
195	Քամած մածուն վարունգով		180գր
196	Լեգո (թարմ բանջարեղենով)		150գր
197	Ռեժան		120գր
198	Կաթնաշոռ+թթվասեր		150գր
199	Ավելուկ		150գր
200	Հումուս		120գր
201	Աջարական խաչապուրի		150գր
202	չխրթմա		350գր
203	իմերիթական խաչապուրի		150գր

204	կրակի խաչապուրի		180գր
205	դդումով հավի մսով կարկանդակ		180գր
206	Թավա խաչապուրի		180գր
207	Կեսադիլիա		180գր
208	Բիլյաշի		180գր
209	Կուբդարի		180գր
210	Դիետիկ ուտեստ(Հորթի խաշած միս,բանջարեղեն խաշած)		250գր
211	Հավի մսով գազարով տակոս		170գր
212	Պաչուկա		150գր
213	Մեխիկո		160գր
214	Կևալտիլո		150գր
215	Ռոպա Վիեխա		190գր
216	Խորոված եգիպտացորեն		200գր
217	Էնչիլադաս		250գր
218	Տակո		250գր
219	Գոլֆստրիմ		250գր
220	Չիլի Կոնկ Կորնե		150գր
221	Մեքսիկանո		150գր
222	Սպիտակ ապուր բանջարեղենով		250գր
223	Յուկատա		190գր
224	Ձկան կոտլետ		120գր
225	Կոռտեսի		120գր
226	Կաղամբով փաթույթ		150գր
227	Էմպանադա		150գր
228	Պուչեռո		130գ
229	Ռենա		120գր
230	Ֆալաֆել		150գր
231	Կավարելլի		120գր
232	Ռիզոտտո		130գր
233	Կանելոնի մսով		150գր
234	Կոտոլետտո		120գր
235	Պեպերոնի		150գր
236	Բեշամել		150գր
237	Ռիփա		190գր
238	Գորգոնզոլա		150գր
239	Կապրեզե		190գր
240	Ֆետուչինի		150գր
241	Բոստոն		150գր
242	Բոմբոլյոնի		120գր
243	Պենե		120գր
244	Քինգ Ռոլ		120գր
245	Կուգ-Պաու		120գր
246	Թայբեֆ		150գր
247	Ին-Յան		130գ
248	Էստերհաիզի		190գր
249	Տայլատելի		150գր
250	Բիֆ Մաշռում		150գր
251	Ռոլ Փաուդ		120գր
252	Չիքն ջինջեռ		120գր
253	Քինուա		120գր
254	Սպինաչ		120գր
255	Գրիլ բանջարեղենային		150գր
256	Բիֆ պիստաչո		120գր
257	Գրատեն		150գր

258	Քյուպս		120գր
259	Միցցուկան		120գր
260	Էյֆելլ		120գր
261	Ֆիլադելֆիա		120գր
262	Ռիբս		120գր
263	Շաքար չորակի		50գր
264	Ղուրաբիա		50գր
265	Սաթի քյուֆթա		120գր
266	Գոնիո		130գր
267	Օստրի		130գր
268	Օջախուրի		150գր
269	Ֆրիկադելկա		120գր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ 900011018539
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գլխավոր քարտուղարի
պաշտոնակատար
_____ Վ. Հարությունյան

ԿԱՏԱՐՈՂ

«ՍԱԼՈՆ» ՍՊԸ

ք. Երևան, Դուրյան թաղ.49 շ., բն.14
ՀՎՀՀ 00889166
h/h 2471201718520000
Արդշինինվեստբանկ ՓԲԸ
Տնօրեն՝ Ա. Մուղումյան
_____
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
« » 2019թ. կնքված
ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/40 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
« » 2019թ. կնքված
ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/40 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 4.1
ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/40 ծածկագրով
Գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(որակավորման ապահովում)

ք. Երևան « 05 » Դեկտեմբեր 2019 թ.**

Սալոն ՍՊԸ ի դեմս Ընկերության տնօրեն Արամ Մուղումյան(Նույնականացման քարտ՝ 000728626 որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/40 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Սալոն ՍՊԸ

ընկերության անվանումը

Քանաքեռ-Զեյթուն, Դուրյան թղմ. 49 բն 14

ընկերության հասցեն

«Արդշինբանկ» ՓԲԸ

ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

2471201718520000

ընկերության բանկային հաշվեհամարը

00889166

ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Արամ Մուղումյան

ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

Օր/ամիս/տարի

«ՍԱԼՈՆ»
"САЛОН"
"SALON"
00889166

1.	**ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***
2. Թիվ	
3.	Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն " **Սալոն ՍՊԸ**	
5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝)՝«Արդշինբանկ» ՓԲԸ «Արաբկիր»մասնաճյուղ	
6. Վճարողի հաշվի համարը՝**2471201718520000**	
7. Վճարողի ՀՎՀՀ՝**00889166**	
8. Վճարողի ՀԾՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ **ՀՀ Ֆինանսների նախարարություն**	
10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)	
11. Շահառուի ՀՎՀՀ՝ **02629081**	
12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**	
13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) **900005000758**	
14.Գումարը (թվերով և բառերով)՝19,560,000 (տասնինը միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար)	
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀդրամ(AMD)	
17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(որակավորման ապահովման համար)*	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/40	
19. Վճարման պայմանները՝	<ակցեպտավորված վճարում>
20. Առդիր էջերի քանակը՝ — էջ	
22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.

«ՍԱԼՈՆ»
"САЛОН"
"SALON"
00889166

24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ. Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

** Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

Հավելված 5.1
ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/40 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

ք. Երևան «_05_» Դեկտեմբեր 2019թ.**

Սայոն ՍՊԸ ի դեմս Ընկերության տնօրեն Արամ Մուղումյան(Նույնականացման քարտ՝ 000728626 որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից
կազմակերպված՝ ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/40 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.5 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.6 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.7 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների

համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.8 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.9 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Սալոն ՍՊԸ
ընկերության անվանումը

Քանաքեռ-Զեյթուն, Դուրյան թղմ. 49 բն 14
ընկերության հասցեն

«Արդշինբանկ» ՓԲԸ
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

2471201718520000
ընկերության բանկային հաշվեհամարը

00889166
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Արամ Մուղումյան
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

Օր/ամիս/տարի

«ՍԱԼՈՆ»
"САЛОН"
"SALON"
00889166

1.	**ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***
2. Թիվ	
3.	Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն " **Սալոն ՍՊԸ**	
5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝«Արդշինբանկ» ՓԲԸ «Արաբկիր»մասնաճյուղ	
6. Վճարողի հաշվի համարը՝**2471201718520000**	
7. Վճարողի ՀՎՀՀ՝**00889166**	
8. Վճարողի ՀԾՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ ՀՀ Ֆինանսների նախարարություն	
10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)	
11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02629081	
12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	
13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900005000758	
14.Գումարը (թվերով և բառերով)՝ 1,956,000 (մեկ միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար)	
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16.Արժույթը (բառերով և կոդով)՝ՀՀ Դրամ AMD	
17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի ապահովման համար)*	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/40	
19. Վճարման պայմանները՝	<ակցեպտավորված վճարում>
20. Առդիր էջերի քանակը՝ — էջ	
22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.

«ՍԱԼՈՆ»
"САЛОН"
"SALON"
00889166

24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

** Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

10.12.2019թ կնքված N «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/40» ծածկագրով հաճախորդների սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք.Երևան «13» մարտի 2020թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Վ. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից «Սալոն» ՍՊԸ -ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Մուղումյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441 հոդվածով և 10.12.2019թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/40» գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 7.5 և 7.15 կետերով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին

1.1 Հաստատել Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծառայությունների մատուցման նպատակով ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը /կցվում է/:

1.2 Սահմանել, որ Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև համաձայնագիրն ուժի մեջ մտնելը՝ 08.01.2020թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ մինչև սույն թվականի դեկտեմբերի 20-ը: Ընդ որում, մինչև համաձայնագիր կնքելը կատարողի կողմից ծառայության մատուցման դիմաց վճարումը իրականացվում է այդ համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2. Այլ պայմաններ

2.1. 10.12.2019թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/40» ծածկագրով **հաճախորդների սպասարկման** ծառայությունների մատուցման պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են հայերեն լեզվով, երկու /2/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն ք. Երևան, Մ. Ադամյան 1 ՀՎՀՀ 02629081 Հ/Հ 900011018539 ՖՆ գործառնական վարչություն ՖՆ գլխավոր քարտուղար _____ Վ. Հարությունյան	«ՍԱԼՈՆ» ՍՊԸ ք. Երևան, Դուրյան թաղ.49 շ., բն.14 ՀՎՀՀ 00889166 հ/հ 2471201718520000 Արդշինինվեստբանկ ՓԲԸ Տնօրեն՝ Ա. Մուղումյան _____ (ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված
10.12.2019թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/40» ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
«13» _____2020թ. կնքված համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79341210/503	հաճախորդների սպասարկման ծառայություններ	4890000	4890000	4890000	9780000	9780000	9780000	14670000	1467000	14670000	14670000	19560000	19560000	19560000

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ 900011018539
ՖՆ գործառնական վարչություն
ՖՆ գլխավոր քարտուղար

_____ Վ. Հարությունյան

ԿԱՏԱՐՈՂ

«ՍԱԼՈՆ» ՍՊԸ
ք. Երևան, Դուրյան թաղ.49 շ., բն.14
ՀՎՀՀ 00889166
h/h 2471201718520000
Արդշինինվեստբանկ ՓԲԸ
Տնօրեն՝ Ա. Մուղումյան

_____
(ստորագրություն)

Կ.Տ.